ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-21/10-1

ք. Երևան «30» 03 2021թ.

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Գրիգորյան-ի, ով գործում է -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԷԼԱԱՄՈԴԱ ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **4070340** /Չորս միլիոն յոթանասուն հազար երեք հարյուր քառասուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	ԷԼԱԱՄՈԴԱ ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3	ք. Երևան, Զավարյան 57/1
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ	Յունիբանկ ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 34736000021700 10	Հ/Հ 24105020675400
ՀՎՀՀ 02205028	ՀՎՀՀ 00889965
տնօրեն ---------- Ա. Գրիգորյան	տնօրեն ---------- Է. Հովսեփյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-21/10-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը /ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանում/	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	18231910/1	Արտահագուստ ամառային / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	Բանվորական արտահագուստը պոլիեսթերաբամբակային կտորից է: Կտորի բաղադրությունը 40% բամբակ, 60% պոլիեսթեր, մակերեսային խտությունը 245գ/մ2: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի կկազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200մմ չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի կկազմի ոչ պակաս 2000Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 500 Ն, կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը կկազմի ոչ պակաս 2,000ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի կկազմի ոչ ավել -3.5%, ըստ միջնաթելի ± 2.5%: Արտահագուստը բաղկացած է երկարացված բաճկոնից, տաբատից և շապիկից: Բաճկոնի երկարությունը գոտկատեղից ներքև, երկլանջ ծալովի օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Թևքերը՝ երկարաթև, դաստակի հատվածում 5,5 սմ լայնությամբ մանժետով, որը կոճկվում է մեկ կոճակով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով, որի հանգույցի խաչաձև ամրությունը 600 Հ, իսկ վերին սահմանափակիչների ամրությունը 200 Հ: Բաճկոնի կողային հատվածում տեղադրված է 2 ներկարված գրպան, որոնք թեքված են դեպի ներս և կրծքային ձախակողմյան հատվածում մեկ վրադիր ծավալային գրպան: Բաճկոնի կողային ներսի գրպանների մուտքի ձևածքը շեղ է 2.5 – 3 սմ լայնությամբ մանժետով: Գրպանները մշակված են սև գույնի բամբակյա աստառից, որի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ2: Բաճկոնի գոտկատեղում մշակված է գոտի, որի մեջ տեղադրված է 6 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիրլետանման ռեզին՝ նախատեսված բաճկոնի չափսն կարգավորելու համար: Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով,	լրակազմ	8400	1041600	124	ք. Երևան, Արցախի փողոց 4-րդ նրբանցք, հ 14	124	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանների մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքու

			ինչպես նաև թևերին տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսանդրադարձման գործակիցը 600C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 кд/лк.м2 ցուցանիշից: Բաճկոնի կրծքավանդակի հատվածում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Տաբատը ուղիղ ձևվածքի, առջևից 2 ներկարված կողային գրպաններով, որոնք մշակված են սև գույնի բամբակյա աստառից: Աստառի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ2: Տաբատի ներքևի ծնկային հատվածում տեղադրված են 2 վրադիր ծավալային, ձևավոր գրպաններ՝ կափույրներով: Վրադիր գրպանների բարձրությունը ոչ պակաս 21 սմ, լայնությունը՝ ոչ պակաս 18 սմ: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամքջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսատանդրադարձման գործակիցը 600C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 кд/лк.м2 ցուցանիշից: Շապիկը պետք է կարված լինի 100% բամբակ պարունակող մուգ գույնի կտորից: Արտահագուստի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայիով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ մշակված հատուկ ամրակարի մեքենայով: Արտահագուստը պետք է արտադրված լինեն 2021 թ-ից ոչ շուտ: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1 կոմպլեկտ, տոպրակները պիտակավորված, պիտակների վրա նշված կլինի տեսականու անվանումը, քանակը, չափսը: Ըստ չափսերի քանակները՝ 44 չափսի- 1 հատ, 46/4-1 հատ, 48-2 հատ, 48/3-9 հատ, 48/4-2 հատ, 50-9 հատ, 50/2- 1 հատ, 50/3-14, 50/4-7 հատ, 50/5-1 հատ, 52- 7 հատ, 52/3-10 հատ, 52/4-6 հատ, 54-13 հատ, 54/2-2 հատ, 54/3-7 հատ, 54/4-9 հատ, 56-9 հատ, 56/4-5 հատ, 58-6 հատ, 60-1 հատ, 62/4-2 հատ. Կներկայացվի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Արտահագուստի ձևը և գունային համադրությունը ըստ պատվիրատուի ցանկության: Մինչև ապրանքի մատակարարումը կներկայացվի առաջարկվող կտորի տեխնիկական տվյալների լաբորատոր փորձարկման եզրակացություն՝									մ

			տրված ՀՀ-ում հավատարմագրված փորձագիտական կենտրոնի կողմից :							
2	18231910/2	Ալյումինագույնո ձմեռային / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	Ձմեռային արտահագուստը պոլիեսթերաբամբակային կտորից է, բաղկացած է հանովի գնխանոցով բաճկոնից, տաբատից և շապիկից: Կտորի բաղադրությունը 40% բամբակ, 60% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245գ/մ²: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի կկազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200մմ չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի կկազմի ոչ պակաս 2000Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 500 Ն, կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը կկազմի ոչ պակաս 2,000ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի կկազմի ոչ ավել -3.5%, ըստ միջնաթելի ± 2.5%: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով, ներքևի հատվածում տեղադրված գոտի՝ ռեզինե մանժետով: Երկարությունը գոտկատեղից 15-20 սմ ներքև, կանգուն օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Բաճկոնի առաջամասում և ետևամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 300 գ/մ2 խտությամբ սինթեպոն որը մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ, իսկ թևերի հատվածում 200 գ/մ2 խտությամբ սինթեպոն որը ևս մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ: Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը կկազմի ոչ պակաս 60- 65 գ/մ2: Թևքերը՝ ներկարված են, դաստակի հատվածում 5 սմ լայնությամբ ռեզինե մանժետով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով: Պաշտպանող կափույրը միանում է առաջամասին նիկելագույն 4-5 զույգ կոճգամներով: Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է 2 ներսի գրպան, որոնց մուտքի հատվածն մշակված է լայն մանժետով: Բաճկոնն ունի նաև 2 վրադիր ծավալային գրպան կրծքամասի աջ և ձախ հատվածներում: Կրծքամասի գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրներն մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինն ստորինից 1-2 մմ նեղ: Կափույրը մշակվում է մի կողմից ուղիղ, իսկ մյուս կողմից շեղակի ձևվածքով: Բաճկոնի կրծքավանդակի հատվածի վրադիր գրպաններները մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպանները չաղտոտելու համար: Կրծքային գրպանները փակվում է կպչունային փականներով: Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով, ինչպես նաև թևերին տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսատանդրադարձման գործակիցը 600C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 кд/лк.м2 ցուցանիշից: Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է ընկերության անվանումը, իսկ կրծքավանդակի ձախակողմյան գրպանի վրա՝ ընկերության տարբերանշանը: Գլխանոցը բաղկացած է 3 հատվածից, որից մեջտեղինն բաճկոնի	լրակազմ	16350	784800	48		48	

		կոկետկայի գույնին համապատասխան, իսկ երկու կողային հատվածներինն բաճկոնի հիմնական գույնին համապատասխան: Գլխանոցն առանձնանում է բաճկոնից շղթայի միջոցով, իսկ կոճկումն իրականացվում է միմյանց նկատմամբ խաչաձև կարված 7 սմ երկարությամբ երկու զույգ կպչունային ժապավենների: Տաբատը ուղիղ ձևվածքի; ներսի կողմից որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 200 գ/մ2 խտությամբ սինթեպոն որը մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ: Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 60- 65 գ/մ2: Տաբատը ունի առջևից 2 կողային ներսի գրպաններ և 2 վրադիր ծավալային գրպաններ ծնկամասի հատվածում: Կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է, որոնց մուտքի հատվածն մշակված է նեղ երիզներով: Վրադիր գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրներն մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինն ստորինից 1-2 մմ նեղ: Վրադիր գրպանները մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպաններն չաղտոտելու համար: գրպանները փակվում են կպչունային փականներով: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսատանդրադարձման գործակիցը 600C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 кд/лк.м2 ցուցանիշից: Տաբատի բոլոր զարդակարերը կլինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով: Շապիկը կարված է 100% բամբակ պարունակող մուգ գույնի կտորից: Արտահագուստի բոլոր զարդակարերը կլինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայիով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում կլինեն ամրակարեր՝ մշակված հատուկ ամրակարի մեքենայով: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1 լրակազմ: Տոպրակները պիտակավորված, պիտակների վրա նշված կլինի տեսականու անվանումը, քանակը, չափսը: Արտահագուստը արտադրված է 2021 թ-ից ոչ շուտ Ըստ չափսերի քանակները՝ 46 չափսի-1 հատ, 46/2-1 հատ, 50-7 հատ, 50/3-3 հատ, 52-3 հատ, 52/2-2 հատ, 52/3-4 հատ, 52/5-1 հատ, 54-3 հատ, 54/3- 2 հատ, 54/4-3 հատ, 56-3 հատ, 56/3-7 հատ, 56/4-2 հատ, 58-2 հատ, 58/3-3 հատ, 60-1 հատ, Կներկայացվի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Արտահագուստի ձևը և գունային համադրությունը ըստ պատվիրատուի ցանկության: ➢ Մինչև ապրանքի մատակարարումը կներկայացվի առաջարկվող							

			կտորի տեխնիկական տվյալների լաբորատոր փորձարկման եզրակացություն՝ տրված ՀՀ-ում հավատարմագրված փորձագիտական կենտրոնի կողմից :							
3	18831200/1	Կոշիկ ամառային / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	Կոշիկ աշխատանքային՝ նախատեսված աշխատակիցների անվտանգության ապահովման համար: Կոշիկը կհամապատասխանի EN 20345 ստանդարտի պահանջներին՝ S3 պաշտպանողականության աստիճանով: Կոշիկը բաղկացած է առաջամասից, ճտքերի ստորին հատվածից, ճտքերի վերին հատվածից, լեզվակից, տակացուից: Կոշիկի առաջամասը, ճտքերի ստորին հատվածները և լեզվակը կարված է 1.9 – 2.1 մմ հաստությամբ սև գույնի բնական նակատե կաշվից: Ճտքերի վերին մասը կարված է բաց մոխրագույն կաշվից կամ բարձրորակ բաց մոխրագույն կաշվե փոխարինիչից՝ բաղկացած երկու հատվածից, որից վերին հատվածի բարձրությունը կազմում է 3 սմ, իսկ ստորին U –աձև հատվածի մեջտեղի մասի բարձրությունը 6.5սմ: Բաց մոխրագույն կաշվե հատվածի ներսի կողմից տեղադրված է սպունգե ներդիր: Կոշիկի լեզվակը կողքերից մշակվում է լրացուցիչ փակ կափույրներով՝ նախատեսված կեղտի ներթափանցումն կանխարգելելու համար: Կոշիկի ընդհանուր բարրձրությունը կազմում է 15 սմ, իսկ ճտքի բարձրությունն ետևամասի հատվածից կազմում է 10.5 սմ: Ճտքերին առկա են 5 շարք մետաղական արագաքուլ կեռիկներ, կապումը՝ երկգույնանի կոշկաքուղերով: Կոշիկի տակացուն պատրաստված է երկշերտ պոլիուրետանից՝ ընդ որում տակացուի վերին շերտն մոխրագույն գույնի է, իսկ ստորին շերտն սև գույնի Կոշիկի տակացուի միացման եղանակը՝ պոլիուրետանի ուղիղ սրսկում - PU Injection method, որն դարձնում է տակացուն զագատովկայի հետ մեկ ամբողջություն: Կոշիկը ունի մետաղական քթամաս՝ նախատեսված ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից պաշտպանելու համար, և մետաղական ճկվող ներդիր՝ նախատեսված ոտքի թաթերը սուր, կտրող իրերից պաշտպանելու համար: Կոշիկի ներսի հատվածում տեղադրված է նարնջագույն ծակոտկեն գործվածք: Կոշիկները արտադրված կլինեն 2021 թ-ից ոչ շուտ: Ըստ չափսերի քանակները՝ 35 չափսի- 1 հատ, 36-2 հատ, 37 -4 հատ, 38-2 հատ, 39-5 հատ, 40-18 հատ, 41-17 հատ, 42-21 հատ, 43-43 հատ, 44-7 հատ, 45-2 հատ:	զույգ	6500	793000	122		122	
4	18811230/1	Կոշիկ ձմեռային երկարաճիտք / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	Ձմեռային երկարաճիտք կոշիկ՝ նախատեսված աշխատակիցների անվտանգության ապահովման համար: Կոշիկը կհամապատասխանի EN 20345 ստանդարտի պահանջներին՝ S3 պաշտպանողականության աստիճանով: Կոշիկը բաղկացած է առաջամասից, ճտքերի ստորին հատվածից, ճտքերի վերին հատվածից, լեզվակից, տակացուից: Կոշիկի առաջամասը, ճտքերի ստորին հատվածները կարված են 1.9 – 2.1 մմ հաստությամբ սև գույնի բնական նակատե կաշվից: Ճտքերի վերին	զույգ	9440	670240	71		71	

			մասը և լեզվակը կարված են սև գույնի փափուկ արհեստական կաշվից, որի ներսի հատվածում տեղադրված է սպունգե ներդիր: Ճտքերի վերին և ստորին հատվածների միացման կարի ողջ երկայնքով մշակվում է վառ գույնի պարանանման ուռուցիկ տիսմա: Կոշիկի լեզվակի ողջ երկայնքով կողքերից մշակվում են լրացուցիչ փակ կափույրներով՝ նախատեսված կեղտի ներթափանցումն կանխարգելելու համար: Կոշիկի ներսի հատվածում՝ առաջամասը, ճտքերի ողջ բարձրությամբ և հանովի ներդիրը մշակված են խիտ արհեստական մորթուց; Կոշիկի առաջամասը միացումն ճտքի ստորին հատվածին իրականացված է քառաշերտ կարերով, իսկ ճտքի ստորին հատվածը վերինին, ինչպես նաև լեզվակը ճտքերին՝ երկշերտ կարերով: Կոշիկի ընդհանուր բարձրությունը՝ ներառյալ ներբանը կկազմի 22.5-23.5 սմ, իսկ ճտքի բարձրությունն ետնամասի հատվածից կկազմի 16.5 սմ: Ճտքերին առկա են 6 շարք մետաղական արագաքուղ կեռիկներ, կապումը՝ երկգույնանի կոշկաքուղերով: Կոշիկի տակացուն պատրաստված է երկշերտ պոլիուրետանից՝ ընդ որում տակացուի վերին շերտն մոխրագույն գույնի է, իսկ ստորին շերտն սև գույնի Կոշիկի տակացուի միացման եղանակը՝ պոլիուրետանի ուղիղ սրսկում - PU Injection method, որն դարձնում է տակացուն զգաստավկայի հետ մեկ ամբողջություն: Կոշիկը ունի մետաղական քթամաս՝ նախատեսված ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից պաշտպանելու համար, և մետաղական ճկվող ներդիր՝ նախատեսված ոտքի թաթերը սուր, կտրող իրերից պաշտպանելու համար: Կոշիկները արտադրված կլինեն 2021 թ-ից ոչ շուտ: Ըստ չափսերի քանակները՝ 40 չափսի-11 հատ, 41-13 հատ, 42-10 հատ, 43-26 հատ, 44-9 հատ, 45-2 հատ:							
5	18811100/1	Կոշիկ ռետինե երկարաճիտք / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	Երկարաճիտք, ռետինե: ըստ չափսերի քանակները՝ 41-2 հատ, 42-4 հատ, 43-3 հատ, 45-1 հատ	զույգ	2720	27200	10		10	
7	18141100/2	Ձեռնոց բանվորական հինգ մատանի PER026, ՊՎՔ-ից կետիկներով / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	Ձեռնոց բանվորական բամբակե գործվածքց ՊՎՔ կետերով, 5 մատանի, գույնը-սև, PER026 արտիկուլ № 2922169	զույգ	140	73500	525		525	
11	18421130/1	Ձեռնոց տնտեսական / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	Տնտեսական ձեռնոց տարբեր չափսերի պոլիմերային հումքից, ոչ ալերգիկ	զույգ	200	32000	160		160	
13	33141158/1	Քիմիական	Քիմիական պաշտպանիչ ձեռնոցներ, 3-րդ կարգի, քիմիապես անվտանգ, օրգանական լուծիչներում չլուծվող, պատրաստված նիտրիլ	զույգ	810	648000	800		800	

	պաշտպանիչ ձեռնոցներ / ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ /	բութաղիենային ռետինից, առանց փոշի, ոչ ստերիլ, չափսը M կամ 7-8 – 500 զույգ ASTM F 1671 Cat.Nr. 10724603 չափսը S կամ 6-7 – 300 զույգ ASTM F 1671 Cat.Nr. 10325362 Semperguard (Մեծ Բրիտանիա)								

ԳՆՈՐԴ

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 247360000217001 0
ՀՎՀՀ 02205028

տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ԷԼԱԱՄՈԴԱ ՍՊԸ
ք. Երևան, Զավարյան 57/1
Յունիբանկ ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 24105020675400
ՀՎՀՀ 00889965

տնօրեն ---------- Է. Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-21/10-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝, այդ թվում	Ընդամենը
1	18231910/1	Արտահագուստ ամառային	Հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում	1041600
2	18231910/2	Արտահագուստ ձմեռային		784800
3	18831200/1	Կոշիկ ամառային		793000
4	18811230/1	Կոշիկ ձմեռային երկարաճիտք		670240
5	18811100/1	Կոշիկ ռետինե երկարաճիտք		27200
7	18141100/2	Ձեռնոց բանվորական հինգ մատանի PER026, ՊՎՔ-ից կետիկներով		73500
11	18421130/1	Ձեռնոց տնտեսական		32000
13	33141158/1	Քիմիական պաշտպանիչ ձեռնոցներ		648000

ԳՆՈՐԴ
Երևանի Ջերմաէներգետիկական կենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 24736000021670010
ՀՎՀՀ 02205028

տնօրեն _____ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԷԼԱԱՄՈԴԱ ՍՊԸ
ք. Երևան, Զավարյան 57/1
Յունիբանկ ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 24105020675400
ՀՎՀՀ 00889965

տնօրեն _____ Է. Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-21/10-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-21/10-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն